ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	թիվ 174-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2015.09.01/22(534) Հոդ.246	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Կենտրոնական բանկի խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	11.08.2015
Ստորագրող մարմինը	Կենտրոնական բանկի նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	14.08.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.09.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 6/01-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ն

Պետական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

թիվ 174-Ն

11 օգոստոսի 2015 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 6/01-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրա
րդ հոդվածի 2-րդ մասը, 11-րդ հոդվածի 2-րդ մասը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 1
րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 29-րդ հոդվածի 4-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մա
հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 36-րդ հոդվածի 1-ին մասը, 40-րդ հոդվածի 2-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստ
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հ
Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***ո***

1. Հաստատել «Արժեթղթավորման հիմնադրամների գրանցումը և գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակ
սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

2015 թ. օգոստոսի 14
Երևան

Հավե

Հաստ
ՀՀ կենտրոնակ
2015 թվական
թիվ 174-Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 6/01

ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթավորման հիմնադրամների գրանցման կարգը,

2) արժեթղթավորման հիմնադրամների տնօրենների խորհրդի անդամների նշանակման կարգը,

3) արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին և նրա գործունեությանը ներկայացվող պահանջները,

4) արժեթղթավորման հիմնադրամների կողմից ձեռք բերվող ածանցյալ արժեթղթերի տեսակները և դրանցում ներդրումն

5) ակտիվների խմբի գրանցման կարգը, ակտիվների խմբի ռեգիստրի վարման կարգը,

6) վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվության ստացման կարգը,

7) արժեթղթավորման հիմնադրամի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշները և

8) արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի ցանկը,

9) արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունում փոփոխությունների գրանցման և այլ փոփոխությունների ներկ

2. Սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոն մուտքագրելու միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:

3. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերենով, Յունիկո Դի Էֆ» ֆորմատով (էլեկտրոնային տարբերակով ներկայացվող փաստաթղթերի դեպքում, բացառությամբ էքսել (excel) ֆորմ փաստաթղթերի), եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:

4. Տնօրենների խորհրդի անդամի վերաբերյալ միջնորդագիր-տեղեկանքը Կենտրոնական բանկ է ներկայացվում էքսել (ex

5. Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները (դրանց փոփոխությունները, լրացումները) տրամադ կառավարչին էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոն կանոնադրությունների, ինչպես նաև դրանցում փոփոխությունների ու լրացումների էլեկտրոնային տարբերակները Կենտրոն տեղադրվում են www.cba.am ինտերնետային կայքում՝ կանոնադրությունները (դրանցում փոփոխությունները, լրացումները) բանկում գրանցվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Սույն կանոնակարգով սահմանված ոչ հայերեն փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում կառավարման (հիմնադրամի կառավարչի) կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ: Ը հայերեն փաստաթղթերի միջև հակասություն կամ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում առաջնահերթությ տարբերակին:

7. Սույն կանոնակարգի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերում թերությունների (վրիպումներ, ոչ իրավաբանական թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում Կենտրոնական բանկը այդ թերությունների դիմումը ներկայացրած անձին: Համապատասխան դիմումը ներկայացված է համարվում ճշգրտված տեղեկությունները և փ Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, դիմումի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ փաստաթղթ ներկայացումը:

8. Սույն կանոնակարգով սահմանված գործընթացների շրջանակներում ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվ լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներ փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:

9. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխա կայացումը փոխվել է, ապա փոփոխված փաստաթուղթը Կենտրոնական բանկ է ներկայացվում 3 աշխատանքային օրվա ընդ

10. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական և (կամ) վերահսկողական նպատակներից ելնելով, լրացուցիչ տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ: Կենտրոնական բանկի կողմից դիմումի (միջնորդագրի) քննության դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի քննության համար սահմանված ընկած օրերի ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝

1) **Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

2) **հանձնաժողով՝** Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով.

3) **հիմնադրամ՝** արժեթղթավորման հիմնադրամ.

4) **ակտիվների խմբի ռեգիստր՝** ապահովման միջոց հանդիսացող ակտիվների վերաբերյալ սույն կանոնակարգով սահ տեղեկությունների ամբողջություն.

5) **շահագրգիռ անձ՝** անձ, որը սույն կանոնակարգի համաձայն ներկայացրել է ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկությ դիմում:

12. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

13. Հիմնադրամի գրանցման համար հիմնադիրը(ները) Կենտրոնական բանկ է(են) ներկայացնում հետևյալ փաստաթղթ

1) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված փաստաթղթերը, ընդ որում.

ա. գրանցման դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,

բ. հիմնադրամի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված ձևի տիտղոսաթեր

գ. հիմնադրամի գործունեության տնտեսական ծրագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

2) տնօրենների խորհրդի անդամների նշանակման համաձայնության տրամադրման համար սույն կանոնակարգի Գլուխ փաստաթղթերը,

3) հիմնադրի (հիմնադիրների ժողովի) որոշմամբ հաստատված՝ հիմնադրամի կառավարչի հետ կնքվելիք պայմանագրի

4) Կենտրոնական բանկի պահանջի դեպքում՝ հիմնադրամի առաջիկա 3 տարիների գործունեության մանրամասն նկարա պարունակի տեղեկություններ նախատեսվող թողարկումների, դրանց հիմնական պայմանների, դրանց ապահովություն հան արժեթղթավորման պրոցեսում ընդգրկվող պոտենցիալ անձանց շրջանակի (նախաձեռնողներ, վաճառողներ, սպասարկողնե պոտենցիալ ներդրողների շրջանակի վերաբերյալ:

14. Կենտրոնական բանկը արժեթղթավորման հիմնադրամին տրամադրում է գրանցման վկայական՝ սույն կանոնակարգ սահմանված ձևին համապատասխան:

ԳԼՈՒԽ 4. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

15. Տնօրենների խորհրդի անդամի նշանակման համաձայնությունը ստանալու համար հիմնադիրը (հիմնադիրները) Կեն ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) տնօրենների խորհրդի անդամ նշանակելու համաձայնությունն ստանալու և տնօրենների խորհրդի անդամի ու նրա գոր վերաբերյալ միջնորդագիր-տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի,

2) հիմնադրի (հիմնադիրների) իրավասու մարմնի որոշումը հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամի նշանակման մ

3) տնօրենների խորհրդի անդամի թեկնածուի՝ այլ կազմակերպություններում աշխատելու դեպքում՝ տվյալ կազմակերպ համաձայնությունը:

16. Հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամի թեկնածուն պետք է ունենա ֆինանսական ոլորտում առնվազն 3 տարվ և բարձրագույն կրթություն:

17. Եթե տնօրենների խորհրդի անդամի թեկնածուն չունի սույն կանոնակարգի 16-րդ կետով նախատեսված աշխատանք բարձրագույն կրթություն, ապա նա իրավունք ունի Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան պաշտոններում ա մոտ բավարար գիտելիքների ու հմտությունների առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, տեղեկությու հիմնավորումներ: Ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների և (կամ) այլ հիմնավորումների հիման վրա հանձնաժո եզրակացությամբ թեկնածուն համարվում է համապատասխանության չափանիշներին բավարարող:

18. Տնօրենների խորհրդի անդամները մասնագիտական համապատասխանության ստուգման նպատակով սույն գլխով նա փաստաթղթերը ներկայացնելուց հետո անցնում են հարցազրույց հանձնաժողովում: Հիմնադրամի տնօրենների խորհրդի անդ լինի ֆինանսական համակարգի, մասնավորապես՝ արժեթղթավորման հիմնադրամների գործունեությունը կարգավորող օրեն ակտերին: Հարցազրույցի արդյունքներով Կենտրոնական բանկի նախագահն ընդունում է որոշում՝ այդ պաշտոնում տնօրենն համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ:

19. Տնօրենների խորհրդի անդամի մասնագիտական համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:

20. Կենտրոնական բանկը պարտավոր է սահմանված փաստաթղթերն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, տրաս խորհրդի անդամի նշանակման համաձայնությունը կամ մերժել: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստ

նպատակով մեկամյա ժամկետը կարող է կասեցվել: Կենտրոնական բանկի կողմից մեկամյա ժամկետում համաձայնությունը
մեկամյա ժամկետը կասեցնելու մասին հիմնադրամին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

ԳԼՈՒԽ 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ Պ

21. Կառավարիչն իրականացնում է Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները, այդ թվում.
1) հիմնադրամի արժեթղթերի թողարկման և մարման իրականացում (կազմակերպում),
2) հիմնադրամի համար ակտիվների ձեռքբերում,
3) հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպում,
4) հիմնադրամի տնօրենների խորհրդին և հիմնադիրներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,
5) այլ ադմինիստրատիվ գործառույթներ:
22. Կառավարիչը կարող է իր գործառույթների մի մասը (այդ թվում՝ հիմնադրամի հաշվապահական հաշվառումը) պաս
դրա հնարավորությունը նախատեսված է հիմնադրամի կանոնադրությամբ և արժեթղթերի թողարկման ազդագրով: Այդ դեպ
շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականա
23. Կառավարիչը պարտավոր է նախապես՝ առնվազն 15 օր առաջ տեղեկացնել Կենտրոնական բանկին կառավարման գ
պատվիրակման մասին՝ ներկայացնելով երրորդ անձի հետ կնքված գործառույթների պատվիրակման պայմանագրի պատճեն
24. Կառավարիչը չի կարող պատվիրակել կառավարման գործառույթները երրորդ անձին, եթե գործառույթների պատվիր
1) առաջացնում է շահերի բախումներ երրորդ անձի և կառավարչի միջև,
2) անհնար կդարձնի կառավարչի կողմից պատվիրակված գործառույթների պատշաճ իրականացման նկատմամբ անընդ
հսկողության իրականացումը,
3) ստեղծում է այնպիսի իրավիճակ, որի դեպքում կառավարիչը փաստացի չի իրականացնում հիմնադրամի կառավարու
25. Հիմնադրամի կանոնադրությունը պետք է սահմանի կառավարման այն գործառույթների ցանկը, որոնք կարող են պա
անձին:
26. Կառավարչի գործառույթները չեն կարող պատվիրակվել նախաձեռնող, վաճառող կամ սպասարկող հանդիսացող ընկ
27. Կառավարիչը կարող է կառավարել մեկից ավելի հիմնադրամներ:
28. Կառավարիչը պարտավոր է իրականացնել հիմնադրամի ակտիվներում ընդգրկված արժեթղթերից բխող բոլոր իրավ
29. Կառավարիչն իրավունք չունի.
1) անհատույց օտարել հիմնադրամի ակտիվները,
2) օգտագործել հիմնադրամի ակտիվներն ի շահ իրեն,
3) հիմնադրամի ակտիվների հաշվին իրականացնել սեփական և/կամ երրորդ անձանց պարտավորությունների մարում, ո
Օրենքի 6-րդ կամ 7-րդ հոդվածներով,
4) վաճառել իր սեփական գույքը իր կողմից կառավարվող արժեթղթավորման հիմնադրամին:
30. Կառավարիչ կարող է լինել այն ներդրումային ընկերությունը, որի ընդհանուր կապիտալը կազմում է առնվազն 100 մ
իրավունք ունի մատուցելու «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս
կետերով նախատեսված ներդրումային ծառայություններից որևէ մեկը:
31. Հիմնադրամի ակտիվներն առանձնացված են այլ անձանց (այդ թվում՝ տվյալ հիմնադրամի հիմնադիրների) գույքից և
առանձին: Կառավարիչը պետք է ապահովի հիմնադրամի միջոցների հաշվառումն ու կառավարումը իր սեփական ակտիվնե
կառավարվող այլ հիմնադրամների ակտիվներից և այլ փաթեթներից առանձին:

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵ ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

32. Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված դեպքերում կարող են ձեռք բերվել այնպիսի ածանցյալ արժեթղթերը, որո
1) թույլատրված են առևտրին Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվ
68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ով սահմանվ
Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ կարգավորվող շուկայում.
2) շրջանառվում են արտաբորսայում և
ա. գործարքի մյուս կողմը հանդիսանում է ֆինանսական վերահսկողության ենթակա սուբյեկտ, և
բ. ձեռք բերված ածանցյալ գործիքի արժեքը կարող է արժանահավատորեն գնահատվել յուրաքանչյուր օր, և հիմնադրամ
պահին իր նախաձեռնությամբ ողջամիտ գնով իրացնել ածանցյալ գործիքը:
33. Ածանցյալ գործիքի գծով գործարքի մեկ կողմի հետ կապված ռիսկի ծավալը չպետք է գերազանցի հիմնադրամի ակտի
արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, կամ 5 տոկոսը, եթե գործարքի կողմը այլ ֆինանսական կազմակերպությու
34. Հիմնադրամի ակտիվներում ընդգրկված բոլոր ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր ծավալը չպետք
հիմնադրամի ակտիվների ընդհանուր արժեքը:

ԳԼՈՒԽ 7. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԽՄԲԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ԽՄԲԻ ՌԵԳԻՍՏՐԸ

35. Ակտիվների խմբի գրանցման համար հիմնադրամի կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) տեղեկություններ ակտիվների խմբում ընդգրկվող յուրաքանչյուր ակտիվի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգ
որում, միևնույն արժեթղթավորման հիմնադրամի կողմից առանձին՝ մեկից ավելի թողարկումներ իրականացվելու դեպքում
յուրաքանչյուրի համար ապահովման միջոց հանդիսացող ակտիվների խմբերը ներկայացվում են առանձին ցանկերով.

2) ակտիվների ցանկում ներառված ակտիվների նկատմամբ արժեթղթավորման հիմնադրամի սեփականության իրավունք
փաստաթղթերը՝ Կենտրոնական բանկի պահանջով:

36. Սույն կանոնակարգի 35-րդ կետով նախատեսված տեղեկատվության հիման վրա Կենտրոնական բանկը ստեղծում և
խմբի ռեգիստր:

37. Այն դեպքում, երբ միևնույն արժեթղթավորման հիմնադրամի կողմից իրականացվում են առանձին՝ մեկից ավելի թող
ակտիվների խմբի ռեգիստրում պետք է նշվի նաև տվյալ խմբի գրավով ապահովված պարտավորությունը:

38. Կառավարիչը պատասխանատվություն է կրում ակտիվների խմբի ռեգիստրում ներառման ենթակա՝ Կենտրոնական
տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար:

39. Ակտիվների խմբի ռեգիստրում ներառման ենթակա տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտ
Բի-էյ Նեթ համակարգով: Սույն կանոնակարգի Հավելված 6-ը էլեկտրոնային ձևով ներկայացնելիս ֆայլը կոդավորվում է ըստ
կողմից տրամադրված կոդավորման:

40. Ակտիվների խմբի ռեգիստր մուտքագրված տվյալների փոփոխության դեպքում հիմնադրամը պարտավոր է Կենտրոն
ներկայացնել այդ փոփոխությունները համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի՝ դրանց տեղի ունենալու օրվան հաջորդ
աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, պարտադիր ներկայացման ենթակա են առնվազն հետևյալ փոփոխությունն
կանոնակարգի 41-րդ կետով նախատեսված կարգավորումը).

1) ակտիվների ցանկում տեղի ունեցած փոփոխությունները (այդ թվում՝ ակտիվի մարման հետևանքով).

2) այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ակտիվների որակի վատթարացման կամ բարելավման արդյունքում (
դասակարգում, պարտապանի վարկանիշի փոփոխություն, ժամկետանց գումարների վճարում):

41. Եթե Կենտրոնական բանկը այլ աղբյուրներից ստանում է սույն կանոնակարգի 40-րդ կետով նախատեսված տեղեկությ
Կենտրոնական բանկը կարող է տեղեկացնել հիմնադրամի կառավարչին այդ տեղեկությունների ներկայացման անհրաժեշտ
մասին:

42. Սխալ կամ թերի տեղեկատվության ստանալու դեպքում Կենտրոնական բանկը տեղեկատվությունը տրամադրողին
անճշտության մասին:

43. Սխալ կամ թերի տեղեկատվություն տրամադրելու դեպքում հիմնադրամը պարտավոր է սխալ կամ թերի տեղեկատվ
փաստը բացահայտելու (այդ մասին տեղեկանալու) օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ակտիվների խմբ
ակտիվների խմբի վերաբերյալ ճշգրտված տեղեկատվություն: Սույն կանոնակարգի իմաստով սխալ տեղեկատվություն է հա
սահմանված ֆորմատներին չհամապատասխանող կամ տվյալների հակասություն, անհամապատասխանություն պարունակ
44. Ակտիվների խմբի ռեգիստր ներկայացված տեղեկատվությունը հիմնադրամը (հիմնադրամի կառավարիչը) պետք է պ
եղանակով՝ ակտիվների խմբով ապահովված արժեթղթերի մարումից հետո առնվազն մեկ տարի:

ԳԼՈՒԽ 8. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԽՄԲԻ ՌԵԳԻՍՏՐԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ

45. Ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկությունների ստացման համար շահագրգիռ անձը ներկայացնում է դիմում՝ համ
կանոնակարգի Հավելված 7-ի: Դիմումը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, ի
դեպքում՝ թղթային եղանակով:

46. Ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկությունները շահագրգիռ անձանց են տրամադրվում միայն ամփոփ տեսքով կամ
չպետք է թույլ տա բացահայտել անհատական տեղեկատվություն ակտիվների հետ կապված անձի (պարտապանի) վերաբեր
շահագրգիռ անձանց են տրամադրվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ դրա բացակ
թղթային եղանակով: Կենտրոնական բանկը կարող է սահմանել ռեգիստրից տրամադրվող տեղեկությունների ստանդարտ ձ
47. Ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկատվության տրամադրումը շահագրգիռ անձանց իրականացվում է վերջիններիս
կանոնակարգի 45-րդ կետով սահմանված դիմումը ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

48. Կենտրոնական բանկը, հիմնադրամի կառավարչի կողմից համապատասխան պահանջի դեպքում, իր կողմից սահմա
տրամադրում է տեղեկանք ակտիվների խմբի ռեգիստրում ներառված ակտիվի (ակտիվների խմբի)՝ ի ապահովումն դրանցով
արժեթղթերից բխող պարտականությունների կատարման գրանցված լինելու վերաբերյալ:

49. Կենտրոնական բանկի նախագահն իր որոշմամբ կարող է ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկություններ ստանալու
սակագներ և դրանց վճարման կարգը, որով տարբեր կատեգորիայի օգտագործողների համար կարող են նախատեսվել տարբ
50. Շահագրգիռ անձանց կողմից կատարված բոլոր հարցումների մասին տեղեկատվությունը գրանցվում է:

ԳԼՈՒԽ 9. ՎԱՐԿԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑ

51. Օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված վարկային գրավչության միջոցներից բացի, ակտիվներով ապահովված արժե
վարկային գրավչության միջոց, կարող են տրամադրվել նաև արժեթղթերի գծով պարտավորության կատարման երաշխավոր
երաշխիքներ, որոնք տրվել են Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «Բ
ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա պետությունների կառավարությունների, կենտրոնական բանկերի կամ պետա

կազմակերպությունների կողմից:

52. Օրենքի 31-րդ հոդվածում, ինչպես նաև սույն կանոնակարգի 51-րդ կետում չնշված վարկային գրավչության միջոցի տ
թույլտվության համար հիմնադրամը և վարկային գրավչության միջոց տրամադրող անձը հիմնադրամի կառավարչի միջնոր
բանկ են ներկայացնում.

1) դիմում՝ վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվության մասին,

2) վարկային գրավչության միջոցի համառոտ նկարագրությունը,

3) վարկային գրավչության միջոցը տրամադրող անձի՝ տվյալ տարվան նախորդող տարվա տարեկան ֆինանսական հաշ
աուդիտորական եզրակացությունը (առկայության դեպքում), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ֆինանսական վիճակի վ
տեղեկատվություն:

53. Սույն կանոնակարգի 51-րդ կետում նշված տեղեկությունների պարզաբանման համար Կենտրոնական բանկը կարող
կառավարչից և/կամ վարկային գրավչություն միջոցը տրամադրող անձից պահանջել լրացուցիչ տեղեկություններ, բացատրո
փաստաթղթեր:

54. Վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվության համար փաստաթղթերը ստանալուց հետո քսանհինգ
ընթացքում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվության մասյ
ընթացքում թույլտվության մերժման որոշում չկայացնելու դեպքում վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվո
տրված:

55. Ակտիվներով ապահովված արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման 10 տոկոսից ավելին որպես վարկային գրավչությ
համար թույլտվություն ստանալու նպատակով նախաձեռնողը և/կամ վաճառողը հիմնադրամի կառավարչի միջնորդությամբ
ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Կենտրոնական բանկի նախնական թույլտվություն ստանալու դիմում,

2) նախաձեռնողի և/կամ վաճառողի իրավասու մարմնի որոշումը կամ որոշումից քաղվածք՝ թողարկման 10 տոկոսից ա
վերաբերյալ:

Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական թույ
թույլտվությունը մերժելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 10. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

56. Արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձը
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 41-Ն որոշմամբ հաստատված «Ներդ
ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կ
գլխով սահմանված չափանիշներին:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Ինքնալուծարման նախնական համաձայնություն ստանալու համար հիմնադրամի կառավարիչը Կենտրոնական բան
հետևյալ փաստաթղթերը.

1) հիմնադրամի լուծարման նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիրը,

2) հիմնադրամի լուծարման մասին արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի որոշումը,

3) հիմնադրամի ինքնալուծարման հիմնավորումները, այդ թվում՝ պարտավորությունների ամբողջությամբ կատարման
կողմից կամ նախաձեռնողի կամ վաճառողի կողմից ակտիվների հետգնման իրականացման մասին,

4) հիմնադրամի ակտիվների վաճառքի հնարավոր տարբերակների նկարագրությունը, նվազագույն ծախսերի տեսանկյուն
տարբերակը,

5) արժեթղթավորման հիմնադրամի հաշվեկշիռը,

6) ընթացիկ և սպասվող դատական գործերի վերաբերյալ տեղեկանք, արժեթղթավորման հիմնադրամի վրա դրանց ազդ
(օրինակ՝ հնարավոր ծախսեր, արժեթղթավորման հիմնադրամի ակտիվների կալանք և այլն),

7) արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի կողմից ընդունված՝ արժեթղթավորման հիմնադրամի լուծարմ
մասնավորապես պետք է ներառի.

ա. լուծարման նվազագույն և առավելագույն ժամկետները,

բ. իրականացվելիք միջոցառումները և գործողությունները, դրանց իրականացման ժամանակացույցը,

գ. պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո մնացած միջոցները հիմնադիրների միջև բաշխելու կարգը,

դ. լուծարային հանձնաժողովի կազմը,

ե. լուծարային հանձնաժողովի լիազորությունները և պարտավորությունները,

զ. լուծարային հանձնաժողովի ամսական վարձատրության չափը և ծախսերի ամսական սահմանաչափը,

է. լուծարային հանձնաժողովի աշխատակարգը և նիստերի անցկացման, որոշումների ընդունման կարգը,

ը. լուծարման ընթացքում արժեթղթավորման հիմնադրամի կառավարման կարգը,

թ. լուծարային հանձնաժողովի գործունեության դադարեցման կարգը:

ԳԼՈՒԽ 12. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԱՅԼ ՓՈՓՈԽ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

58. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արժեթղթավորման հիմնադրամները պարտավոր են փոփոխուլ կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) Կենտրոնական բանկ գրանցման ներկայացնել արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունում կատարված փո

2) Կենտրոնական բանկին տեղեկացնել տնօրենների խորհրդի անդամին պաշտոնից ազատելու մասին.

3) Կենտրոնական բանկին տեղեկացնել կառավարչի փոփոխման մասին:

59. Արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրս արժեթղթավորման հիմնադրամը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մս ստորագրությամբ՝ վավերացված կնիքով (առկայության դեպքում),

2) արժեթղթավորման հիմնադրամի իրավասու մարմնի կամ դատարանի որոշումը կամ համապատասխան արձանագրո արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրության փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ն խմբագրությամբ կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթ

60. Կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփո տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

61. Արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամին պաշտոնից ազատելու դեպքում հիմնադրամի կառ է Կենտրոնական բանկին՝ կից ներկայացնելով իրավասու մարմնի որոշումը տնօրենների խորհրդի անդամին պաշտոնից ազա

62. Սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված տեղեկանքի 2.6-րդ, 2.8-2.9-րդ, 3.1-րդ, 3.3-րդ ենթակետերով և (կա սահմանված տեղեկությունների փոփոխության դեպքում այդ փոփոխությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում նե Կենտրոնական բանկ:

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկաս
Կանոնակ

Արժեթղթավորման հիմնադրամի գրանցման
դիմումի ձև

Հայաս
Կենտրոն
……

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի …….

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել

_____

արժեթղթավորման հիմնադրամի անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը

ստեղծելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք (եմ) արժեթղթ գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (առդիր՝ ------ էջ):

Մենք (Ես)՝ ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), հավաստիացնում ենք (եմ), որ մանրակրկիտ դիտարկել ենք (ե ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք (եմ), որ տեղեկատվ արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք (եմ), որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացո օրենքով սահմանված պատասխանատվության:

Խնդրում ենք (եմ) գրանցել արժեթղթավորման հիմնադրամը:

Արժեթղթավորման հիմնադրամի հիմնադիր անձինք (անձ)՝

Անվանումը, կազմակերպաիրավական ձևը	Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանուն	Ստորագրություն
_____	_____	_____
_____	_____	_____

«___»_____ 20 թ.

Հավել
«Արժեթղթավորման հիմնա
գործունեության նկաս
Կանոնակ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ԳՐԱՆՑՎԱԾ Է
----------	ՀՀ կենտրոնական բանկում
(հիմնադրամի իրավասու մարմնի անվանումը)	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
--/--/----թ. թիվ ---------որոշմամբ	_____
----------	(ստորագրություն)
(իրավասու անձի պաշտոնը)	

(անուն, ազգանուն, ստորագրություն)	

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Հիմնադրամի լրիվ անվանումը

Հավել
«Արժեթղթավորման հիմնա
գործունեության նկաս
Կանոնակ

Արժեթղթավորման հիմնադրամի գործունեության տնտեսական ծրագրի ձև

ԲԱԺԻՆ I. ՆԱԽԱԲԱՆ
(3-5 էջ)

ԳԼՈՒԽ 1. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
(1,5-2 էջ)

Ներկայացվում են արժեթղթավորման հիմնադրամի մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում՝ արժեթղթավորման անվանումը, գտնվելու վայրը, առաջարկվող ղեկավարների ցանկը, իսկ հայեցողությամբ՝ այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ
(0,5-1 էջ)

Ներկայացվում են արժեթղթավորման հիմնադրամի տնտեսական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման հիմքում դրվա ենթադրությունները, մշակող անձի կամ մշակման աշխատանքները կոորդինացնող անձի վերաբերյալ տվյալները (զբաղեցր հեռախոսի համարը):

ԲԱԺԻՆ II. ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(2-4 էջ)

ԳԼՈՒԽ 3. ՆՊԱՏԱԿԸ
(0.5 էջ)

Ներկայացվում է արժեթղթավորման հիմնադրամի գործունեության նպատակը:

ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(0,5-1,5 էջ)

Բնութագրվում է արժեթղթավորման հիմնադրամի հիմնական գործառնությունների և ծառայությունների ոլորտը՝ պլանս ժամանակաշրջանի համար: Մասնավորապես՝

1) գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների տեսակները և/կամ ենթատեսակները,

2) ֆինանսական ծառայությունների շուկայի նպատակային հատվածներն ըստ տնտեսության ոլորտների:

ԲԱԺԻՆ III. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
(2-4 էջ)

ԳԼՈՒԽ 5. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈ
(1,5-3 էջ)

1. Նկարագրվում է արժեթղթավորման հիմնադրամի արտաքին միջավայրում արժեթղթավորման հիմնադրամի կողմից կ հիմնական այն երևույթները, փոփոխությունները և դրանց հետ կապված ռիսկերը, որոնց հետ արժեթղթավորման հիմնադրա պլանավորվող ժամանակաշրջանում: Մասնավորապես՝

ա) միջազգային շուկաներում.

բ) ներքին տնտեսությունում.

գ) ֆինանսական շուկաներում.

դ) Օրենսդրական դաշտում:

2. Վերլուծությունը կատարվում է միայն վերոհիշյալ ոլորտներում արժեթղթավորման հիմնադրամի կողմից կանխատես երևույթների՝ արժեթղթավորման հիմնադրամի գործունեության վրա ազդեցության տեսանկյունից՝ դիտարկելով դրանք որպե հիմնադրամի գործունեության զարգացման հնարավորություններ, խոչընդոտներ, ռիսկեր կամ սպառնալիքներ: Անհրաժեշտ վերացական արտահայտություններից, երևույթներ նկարագրելուց՝ առանց ներկայացնելու արժեթղթավորման հիմնադրամի ազդեցությունը: Եթե նշված ոլորտներից որևէ մեկում զարգացումները արժեթղթավորման հիմնադրամի գնահատականներու գործունեության վրա (օրինակ՝ միջազգային շուկաներում տեղի ունեցող երևույթները), ապա պետք է հակիրճ նշել դրա պատ

ԳԼՈՒԽ 6. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔ
(0,5-1 էջ)

Գլուխ 5-ում կատարված վերլուծությունից վեր հանել և ամփոփ ներկայացնել արտաքին միջավայրում կանխատեսվող ե արժեթղթավորման հիմնադրամի համար հետագա զարգացման հնարավորություններ և զարգացմանը խոչընդոտող սպառնա ռիսկեր:

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկա
Կանոնակ

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ-ՏԵՂԵԿԱՆՔ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵ
ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մաս 1

Խնդրում ենք Կենտրոնական բանկի համաձայնությունը ----------

(տնօրենների խորհրդի անդամի թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը)

արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ նշանակելու համար:

Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական, բ
ներկայացված անձի՝ արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամի պաշտոնում նշանակումը մերժելու հ
համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը:

Արժեթղթավորման հիմնադրամի իրավասու մարմնի անձի անունը և ազգանունը ----------

Ստորագրություն _____

Մաս 2

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունն**
1. Հիմնադրամի վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն հիմնադրամի տվյալները, որի տնօրենների խորհրդի անդամ դուք պետք է հանդիսանաք)*
1.1 Հիմնադրամի անվանումը և կոդը (առկայության դեպքում)
2. Անձնական տվյալներ
2.1 Անուն, ազգանուն, հայրանուն
2.2 Սեռ՝ o արական o իգական
2.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
2.4. Ծննդավայր

2.5 Քաղաքացիություն

2.6 Նշեք՝

o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
o Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

2.7 Նշեք՝

o Հանրային ծառայությունների համարանիշը
o Կիրառելի չէ

2.8 Նշեք՝

o Հաշվառման վայր
o Փաստացի բնակության վայր

2.9 Նշեք հեռախոսահամար՝

o բջջային
o տնային

2.10 Էլեկտրոնային փոստի հասցե

2.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակ

Անուն, ազգանուն, հայրանուն	Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)
_____	_____
_____	_____

3. **Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն**

3.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	*Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը*	*Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը(--թ-ից մինչև --թ.)*	*Ֆակուլտետը*	*Մասնագիտությունը*	*Գիտակա աստիճան*

3.2 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ *(նշել լեզուն)*

3.3 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում նշ կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	*Կազմակերպության անվանում*	*Կազմակերպության գործունեության ոլորտը*	*Գտնվելու վայր*	*Հեռախոսահամար*	*Պաշտոնը, հիմնական պարտա-կանությունները*	*Ազատման հիմքերը*	Ն կատ աշխ գր տ ներ

3.4. Նշեք՝
o Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձ պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից, ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշ աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսա-համար, էլ փոստի հասցե

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

4. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

4.1 Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար

o Ոչ,
o Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մա վերաբերյալ)

4.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իր ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որ
մեղադրյալ կամ ամբաստանյալ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանց
համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.7 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտ
գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գոյ
կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, հ
կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.8 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակ
Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական
կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.9 Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ
բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջի
ընթացքում

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

4.10 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից՝ որևէ ֆինանսական կազմակերպության գործունեությունը
համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

5. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

5.1 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկ
պարտավորություններ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

5.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակ
հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

6. Ձեր կարծիքով արդյոք առկա են այլ կարևոր տեղեկություններ, *որոնք կցանկանայիք նշել*

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասները

7. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջակ
Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնակա
համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Տնօրենների խորհրդի անդամի թեկնածուի ստորագրությունը ----------

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) ----------

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկաս
Կանոնակ

Արժեթղթավորման հիմնադրամի գրանցման վկայականի օրինակելի ձև

ՀՀ զինանշան

Գրանցվա
ՀՀ կենտրոնական բանկի խորհ
---- թվականի թիվ --- որոշմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույ
վկայականը տրվում է

ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

_____ _____
(արժեթղթավորման հիմնադրամի անվանումը)
արժեթղթավորման հիմնադրամին:

Գտնվելու վայրը
Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____ _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

Ք. ԵՐԵՎԱՆ

…… ……_20 … թ.

Կ.Տ.

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկաս
Կանոնակ

Ակտիվների խմբում ընդգրկվող ակտիվների վերաբերյալ տեղեկություններ և դրանց լրացման

Արժեթղթավորման հիմնադրամի անվանումը _____
Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի անվանումը _____
Ամսաթիվ _____

Ակտիվ															Գործընկեր (պարտ			
Համարը	Նախաձեռնողի մոտ համարը	Տեսակը	Դասը	Արժույթի կոդը	Տարեկան տոկոսադրույքը	Պայմանագրով նախատեսված գումարը	Պայմանագրով նախատեսված ժամկետը (ամիսներով)	Պայմանագրով նախատեսված մարման ամսաթիվը	Մնացորդը	Փաստացի ժամկետը (ամիսներով)	Փաստացի մարման ամսաթիվը	Ժամկետանց գումարը	Ժամկետանց տոկոսը	Ժամկետանց դառնալու ամսաթիվը	Անունը/Անվանումը	Անձնագրի համարը/ՀՎՀՀ	ՀՇՀ կամ ՀՇՀ չունենալու մասին տեղեկանքի համարը	Տ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	

Լրացման ուղեցույց

1-ին սյունակում լրացվում է արժեթղթավորման հիմնադրամի կողմից տրված՝ ակտիվի նույնականացման համարը

2-րդ սյունակում լրացվում է նախաձեռնողի մոտ ակտիվի տարբերակիչ համարը: Ընդ որում, վարկի դեպքում լրացվում է կոդը (առկայության դեպքում), իսկ արժեթղթի դեպքում՝ տարբերակիչ ծածկագիրը

3-րդ սյունակում լրացվում է ակտիվի տեսակը՝ վարկ, արժեթուղթ և այլն

4-րդ սյունակում լրացվում է ակտիվի դասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հուն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտք հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի) (եթե այն

5-րդ սյունակում լրացվում է այն արժույթի կոդը, որով արտահայտված է ակտիվի անվանական արժեքը կամ որով արտա գծով ակնկալվող դրամական հոսքերը

6-րդ սյունակում լրացվում է պայմանագրով նախատեսված տարեկան տոկոսադրույքը

7-րդ սյունակում լրացվում է պայմանագրով նախատեսված գումարը (արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը)

8-րդ սյունակում լրացվում է ակտիվի՝ պայմանագրով նախատեսված ժամկետը (մարման ժամկետը)

9-րդ սյունակում լրացվում է պայմանագրով նախատեսված ակտիվի մարման ամսաթիվը

10-րդ սյունակում լրացվում է ակտիվի պայմանագրային արժեքի (անվանական արժեքի) փաստացի մարման ենթակա գ հավելվածը լրացնելու ամսաթվի դրությամբ

11-րդ սյունակում լրացվում է ակտիվի՝ մինչև մարումն ընկած ժամկետը սույն հավելվածը լրացնելու ամսաթվի դրությամ

12-րդ սյունակում լրացվում է մարված ակտիվի փաստացի մարման ամսաթիվը

13-րդ սյունակում լրացվում է ակտիվի մայր գումարի (անվանական արժեքի) գծով ժամկետանց գումարը (առկայության

14-րդ սյունակում լրացվում է ակտիվի գծով ժամկետանց տոկոսների գումարը (առկայության դեպքում)

15-րդ սյունակում լրացվում է ակտիվի ժամկետանց դառնալու ամսաթիվը (առկայության դեպքում)

16-րդ սյունակում լրացվում է գործընկերոջ (ակտիվի գծով պարտապանի) անունը, ազգանունը (ֆիզիկական անձանց հա

17-րդ սյունակում լրացվում է գործընկերոջ (ակտիվի գծով պարտապանի) անձը հաստատող փաստաթղթի համարը, իրա դեպքում՝ ՀՎՀՀ-ն

18-րդ սյունակում լրացվում է ֆիզիկական անձ գործընկերոջ (ակտիվի գծով պարտապանի) հանրային ծառայության հա ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը

19-րդ սյունակում լրացվում է գործընկերոջ (ակտիվի գծով պարտապանի) տեսակը («ֆիզիկական անձ վարկառու», «իրա վարկառու», «թողարկող» և այլն)

20-րդ սյունակում լրացվում է գործընկերոջը (ակտիվի գծով պարտապանին) միջազգային վարկանշային կազմակերպութ շնորհված վարկանիշը՝ առկայության դեպքում

21-րդ սյունակում լրացվում է գրավի առարկան, իսկ դրա բացակայության դեպքում դրվում է «-» նշանը

22-րդ սյունակում լրացվում է գրավի առարկայի արժեքը (արտահայտված ՀՀ դրամով)՝ ըստ վերջին գնահատման

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկաս
Կանոնակ

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԽՄԲԻ ՌԵԳԻՍՏՐԻՑ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն _____
(արժեթղթավորման հիմնադրամի անվանումը)

արժեթղթավորման հիմնադրամի ակտիվների վերաբերյալ:

Դիմող՝

_____
(անուն, ազգանուն, հայրանուն կամ անվանումը)

Հավել
«Արժեթղթավորման հիմն
գործունեության նկաս
Կանոնակ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____

(արժեթղթավորման հիմնադրամի իրավասու մարմնի անվանումը)

--/--/ ----թ. թիվ -------- որոշմամբ

Փոփոխված է ---------- --/--/---- թիվ -- որոշմամբ

(իրավասու մարմնի անվանում)

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(ստորագրություն)

Արժեթղթավորման հիմնադրամի լրիվ անվանումը

_____

(փոփոխություն(ներ) և (կամ) լրացում(ներ) կամ նոր խմբագրություն)